Համառոտ ակնարկ. Հայաստանում ցկյանս ուսումնառության քաղաքականության վերանայում, Թուրինի գործընթաց 2023

Հիմնական վերլուծական կետերի ամփոփ ներկայացում

Հայաստանում ապրում է մոտ 3 մլն քաղաքացի, որից մոտ 63,7%-ը՝ քաղաքային բնակավայրերում: 2022 թվականին ՀՆԱ-ի աճը կազմել է 12,6 իսկ գործազրկության մակարդակը՝ 11,6 տոկոս: ՀՀ տնտեսության երեք առաջատար ոլորտներն են արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, մեծածախ և մանրածախ առևտուրը, որոնցից յուրաքանչյուրը կազմում է ընդհանուր տնտեսության մոտ 11-12%-ը: Անշարժ գույքի առուծախը և շինարարությունը, թեև ավելի փոքր մասշտաբներով, այդուհանդերձ կազմում են ընդհանուր տնտեսության մոտ 6-8%–ը: Հայաստանի մասնավոր հատվածի հետաքրքիր առանձնահատկությունն այն է, որ ոլորտի ավելի քան 94%-ը բաժին է ընկնում տասը աշխատողներից քիչ աշխատուժ ունեցող միկրոձեռնարկություններին: Զբաղված աշխատուժի 38%-ը կանայք են:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությունը (ՆՄԿ) հիմնականում դպրոցահեն է, և բոլոր հանրային ՄԿՈՒ հաստատություններն ունեն պետական ոչ առևտրային կազմակերպությունների (ՊՈԱԿ) կարգավիճակ և իրենց գործունեությունը ծավալում են համապատասխան օրենքի համաձայն: Շարունակական ՄԿՈՒ (ՇՄԿՈՒ) հիմնականում կազմակերպվում է զբաղվածության քաղաքականության շրջանակներում, որն իրականացվում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) միասնական սոցիալական ծառայությունների կողմից, որոնք պատասխանատու են բնակչության խոցելի համարվող խմբերին ուղղված աշխատաշուկայի քաղաքական փաստաթղթերի մշակման համար: ՇՄԿՈՒ ծրագրերի մի մասն իրականացվում է ՄԿՈՒ հաստատությունների կողմից, որոնք ֆինանսավորվում են կամ մասնակիցների կողմից՝ առևտրային հիմունքներով կամ դոնոր կազմակերպությունների կողմից: Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (ԿԳՄՍՆ)՝ Մասնագիտական կրթության եվ ուսուցման զարգացման ազգային կենտրոնի (ՄԿՈՒԶԱԿ) աջակցությամբ ղեկավարում և համակարգում է հանրային ՄԿՈՒ համակարգը: Ներկայումս պետական ինստիտուցիոնալ հավատարմագրումը պարտադիր է ՄԿՈՒ բոլոր հաստատությունների համար, մինչդեռ ծրագրային հավատարմագրումը կամավոր գործընթաց է:

Ներկայումս առկա են մի շարք խնդիրներ **<u>ՆՄԿՈՒ հասանելիության</u>** հետ կապված: Օրինակ՝ վերջին տարիներին նախնական և հատկապես միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում վճարովի կրթական ծրագրեր տրամադրելու

միտումը շարունակում է աճ գրանցել, ինչը խնդիրներ է ստեղծում կրթության հասանելիության հետ կապված՝ հատկապես տնտեսապես խոցելի խմբերի համար: Անվճար տեղերի թիվաքանակը, այլ օժանդակ միջոցառումների հետ մեկտեղ, առաջնային նշանակություն ունի ՆՄԿՈՒ ծրագրերի հասանելիության բարձրացման դիտանկյունից: Խոցելի խմբերի (ներառյալ հաշմանդամություն ունեցող անձանց) և՛ ՄԿՈՒ, և՛ բարձրագույն կրթության (հետայսու՝ ԲԿ) հասանելիությունը դեռ լրջագույն խնդիր է: Խնդիր են նաև այն սահմանափակումները, որոնք թույլ չեն տալիս որպեսզի ՆՄԿՈՒ համակարգի հասանելիությունն ավելի մեծանա կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար: **<u>ՇՄԿՈՒ հասանելիությունը</u>** գործազուրկների, հաշմանդամների կամ այլ խոցելի խմբերի համար ապահովվում է միայն պետական բյուջեով տրամադրվող ֆինանսավորման սահմաններում, քանզի համապատասխան պլանային վերապատրաստումների ծավալն աննշան է: Առևտրային հիմունքներով մասնակիցների կամ դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող և ՄԿՈՒ հաստատություններում կազմակերպվող ու իրականացվող ՇՄԿՈՒ կրթական ծրագրերը սահմանափակում են ՇՄԿՈՒ ծրագրերի հասանելիությունը: Ավելին, առկա չեն համապարփակ տվյալներ ՄԿՈՒ հաստատությունների կողմից կազմակերպվող ՇՄԿՈՒ ծրագրերի բնույթի և ծավալի վերաբերյալ:

<u>Քաղաքականության մակարդակում</u> ՄԿՈՒ հասանելիության խնդիրների վերաբերյալ հիշատակում կա «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրի» (Կրթություն 2030) իրականացման գործողությունների ծրագրում, որը նախանշում է այն նպատակները, որոնց անհրաժեշտ է հասնել մինչև 2030 թվականը: Նպատակների շարքում են նաև Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության (ՆՄՄԿ) ընդլայնումն ու մատչելի, ներառական, անվտանգ միջավայրի զարգացման ու հասանելիության ապահովումը բնակչության բոլոր խմբերի համար: Համընդհանուր ներառական սովորողակենտրոն կրթական միջավայրի ստեղծումը «Կրթություն 2030»-ի ռազմավարական ուղղություններից է: Միևնույն ժամանակ չկա որևէ հատուկ քաղաքականություն կամ գործողություն, որն ուղղված է ներգաղթյալների, փախստականների կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող մարդկանց ՆՄԿՈՒ և ՇՄԿՈՒ ծրագրերին հասանելիությանը: Ինչ վերաբերում է ՇՄԿՈՒ-ին, 2012թ.-ին «Ցկյանս ուսումնառության հայեցակարգում» սահմանված խնդիրների մեծ մասը դեռևս մնում է չլուծված:

<u>ՆՄԿՈՒ-ի գրավչությանը</u> խոչընդոտում են մի քանի խնդիրներ, ինչպիսիք են սահմանափակ ուղղահայաց և հորիզոնական թափանցիկությունը: ՄԿՈՒ-ն գրավիչ չէ երիտասարդների և հատկապես միջնակարգ դպրոցների

շրջանավարտների համար։ Հիմական դպրոցների շրջանավարտների մեծամասնության հոսքը դեպի ՄԿՈՒ հաստատություններ կապված է 2017 թվականին 12-ամյա պարտադիր միջնակարգ հանրակրթության ներդրման հետ՝ ինչը նրանց թույլ է տալիս նաև միջնակարգ կրթության վկայական ստանալ։ Գրեթե չի իրականացվում անցում ՆՄԿՈՒ–ից դեպի ՇՄԿՈՒ, քանզի մասնագիտական ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման համակարգը ներկայումս գործունակ չէ։ Կիրառվում է կարիերայի ուղղորդման համակարգ, սակայն ՆՄԿՈՒ/ՇՄԿՈՒ շրջանավարտների աշխատանքի տեղավորման կամ ՄԿՈՒ շրջանավարտների մասնագիտական ուղիների վերաբերյալ համապարփակ և օբյեկտիվ տվյալներ առկա չեն։ Տրվող հմտությունների և առկա պահանջարկի միջև կենսական կապի անհամապատասխանությունը բացասաբար է անդրադառնում ՄԿՈՒ գրավչության վրա։ Աշխատանքի վրա հիմված ուսումնառությունը (ԱՀՈՒ) համարվում է վերոգրյալ անհամապատասխանության և ընդհանրապես ՄԿՈՒ-ի համակարգի համապատասխանության և որակի խնդիրները լուծելու միջոցներից մեկը։ Այդուհանդերձ, 2022 թվականին պիլոտային դուալ կրթական ծրագրերի մասնաբաժինն ընդամենը 8,4% էր։ Օտար լեզուների թույլ իմացությունը և անձնակազմի միջազգայնացման հմտությունները խիստ սահմանափակում են ՄԿՈՒ հաստատությունների միջազգայնացման ջանքերը, մինչդեռ միջազգայնացումը համարվում է հայկական ՄԿՈՒ գրավչության բարձրացման միջոց։

<u>Քաղաքականության մակարդակում</u> փորձ է արվում լուծումներ տալ **<u>ՄԿՈՒ-ի գրավչությանն</u>** առնչվող բազմաթիվ խնդիրներին։ ՄԿՈՒ մասին օրենքի նախագիծը նախատեսում է կրեդիտների փոխանցման համակարգի ներդրում՝ սույնով իսկ ապահովելով սովորողների սահուն անցումը հանրակրթությունից ՆՄԿՈՒ։ Այնուամենայնիվ, ՄԿՈՒ-ին առնչվող 3-րդ և 4-րդ մակարդակներից 5-րդ մակարդակին անցնելու վերաբերյալ հատուկ կարգավորում առկա չէ։ Կրթություն 2030-ի շրջանակներում ՆՄԿՈՒ/ՇՄԿՈՒ շրջանավարտների համար ԲԿ հասանելիությունը բարելավելու դրույթ ևս նախատեսված չէ։ Ներկայումս ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման կառուցակարգը գործունակ չէ՝ Ուսուցման ազգային հիմնադրամի սահմանափակ կարողությունների (հիմականում ֆինանսական) և ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման համակարգը կարգավորող թույլ և հնացած ընթացակարգերի պատճառով։ Մեծ ինքնավարություն ունեցող ՄԿՈՒ հաստատությունները հնարավորություն ունեն առաջարկելու ՆՄԿՈՒ կամ ՇՄԿՈՒ նոր ծրագրեր, որոնք ֆինանսավորվելու են պետական բյուջեից։ ՄԿՈՒ մասնագիտությունների պետական չափորոշիչները և համապատասխան մոդուլային ծրագրերը մշակվում են սահմանված ընթացակարգի համաձայն, որում ներգրավված են ոլորտային կոմիտեները, ՄԿՈՒԶԱԿ-ը և ՄԿՈՒ զարգացման ազգային խորհուրդը

(ՄԿՈՒԶԱԽ): Երկրի մասշտաբով, հետագծային ուսումնասիրության մեխանիզմ առկա չէ:

<u>ՆՄԿՈՒ/ՇՄԿՈՒ ռեսուրսները, դասավանդումը/ուսումնառությունը և կառավարումը</u> բախվում են մի շարք խնդիրների, որոնք սահմանափակում են ՄԿՈՒ հասանելիությունն ու գրավչությունը, օրինակ՝

(i) պետական բյուջեի անբավարար ներդրումները՝ ուղղված ՄԿՈՒ հաստատությունների շենքային պայմանների և դասավանդման/ուսումնառության ենթակառուցվածքների բարելավմանը,

(ii) նախնական և միջին ՄԿՈՒ հաստատությունների սովորողներին տրամադրվող պետական կրթաթոշակների շատ ցածր քանակը,

(iii) ՄԿՈՒ հաստատությունների՝ բավական հնաոճ և հնամաշ շենքերի «ժառանգումը», որոնք պահանջում են ծախսատար ներդրումներ պահպանման և ձմռան ամիսներին ջեռուցման համար,

(iv) որոշ մասնագիտությունների գծով ոչ արդիական գրականության կիրառումը,

(v) ուսանողների և դասախոսների՝ օտար լեզուների վատ իմացության պատճառով օտար լեզուներով դասագրքերի, դասավանդման և ուսումնառության նյութերի օգտագործման սահմանափակումը,

(vi) միայն մուտքի պահանջների կիրառումը ՄԿՈՒ հաստատությունների տնօրենների որակավորումների համապատասխանությունը աշխատանքի պահանջներին ստուգելու համար, և վերջապես,

(vii) թեև միջին մասնագիտական կրթության վարչական, մանկավարժական անձնակազմի և ՄԿՈՒ հաստատությունների կառավարման խորհրդի անդամների համար ամեն տարի վերապատրաստումներ են կազմակերպվում, նրանց մասնագիտական կարողությունները դեռևս բարելավման կարիք ունեն.

<u>Քաղաքականության մակարդակում</u> ռեսուրսների, դասավանդման և ուսումնառության, ինչպես նաև ՆՄԿՈՒ/ՇՄԿՈՒ կառավարման սահմանափակումներին վերաբերող անդրադարձը շարունակական գործընթաց է, որը ներառում է.

(i) ՄԿՈՒ հաստատությունների և դրանց մասնագիտությունների բաշխման օպտիմալացում՝ արդյունավետ և որակյալ ՄԿՈՒ տրամադրման պայմանները բարելավելու համար: Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրով նախատեսվում է շուրջ 10 Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական հաստատությունների վերակազմավորում մինչև 2026թ.,

(ii) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագրով և «Կրթություն 2030» գործողությունների ծրագրով նախատեսված ԱՀՈՒ-ի ներդրում և ընդլայնում, և

(iii) մինչև 2023 թվականի ավարտ Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումական հաստատությունների ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների և ձևերի ընդլայնում:

Հիմական առաջարկություններ.

Թուրինի գործընթացի 2–րդ մակարդակի (TRP: Level 2) քաղաքականության վերանայման թիմս առաջարկում է կոնկրետ քայլեր, որոնք կարող են աջակցել ՄԿՈՒ հաստատված քաղաքականությունների իրականացմանը՝ ներառյալ «Կրթություն 2030» գործողությունների ծրագիրը և զբաղվածության առաջիկա ռազմավարությունը: Եզրակացությունները և խորհրդատվությունները ներկայացված են Գլուխ 3-ում, իսկ ավելի մանրամասն՝ Հավելված 4-ում՝ ներառյալ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ գործողությունները: Վեց համախմբված առաջարկություններն ամփոփ ներկայացված են ստորև:

Խորհրդատվություն 1. Ստեղծել ցկյանս ուսումնառության համապարփակ ազգային շրջանակ, որը կբավարարի անհատների և աշխատաշուկայի պահանջները՝ ՄԿՈՒ համակարգի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Սույն խորհրդատվությունը ներառում է տարբեր նախաձեռնություններ, որոնք միասին կարող են նպաստել ցկյանս ուսումնառության միասնական ազգային շրջանակի ստեղծմանը: Դրանցից մի քանիսն արդեն 2030 թվականի կրթության ազգային ռազմավարության մաս են կազմում: Դրանք բոլորն էլ բխում են այս զեկույցի երկրորդ գլխում զետեղված քաղաքականության վերանայումից և ներառում են հետևյալ ոլորտները.

(i) Համաձայնել և հիմական շահագրգիռ կողմերի հետ համատեղ մշակել ցկյանս ուսումնառության համապարփակ ռազմավարություն՝ հիմված համապատասխան կանոնակարգերի, ցկյանս ուսումնառության գործողությունների քարտեզագրման և հայտնաբերված բացերի վրա:

(ii) Մշակել ուսումնառության ճկուն համակարգ՝ կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի և դասընթացների, ճանաչված միկրոորակավորումների (խոցելի խմբերի համար մատչելի ուսումնառության ուղիներ ապահովելու նպատակով) ներառմամբ՝

համատեղելով առցանց և առերես ուսումնառությունը, ԱՀՈՒ–ն, ինքնուրույն ուսումնառությունը և այլն:

(iii) Մշակել և ներդնել հմտությունների կանխատեսման ազգային կառուցակարգեր՝ Հայաստանի մասնավոր հատվածի ապագա կարիքների քարտեզագրման և 4-րդ և 5-րդ մակարդակների ՆՄԿՈՒ/ՇՄԿՈՒ որակավորումների վերանայման համար:

(iv) Միջնակարգ, ՄԿՈՒ և բարձրագույն ուսումնական հաստատություններում, ինչպես նաև երիտասարդական կազմակերպություններում համակարգել կարիերայի ուղղորդման գործողությունները՝ կարիերայի ուղղորդման միջոլորտային ռազմավարության համար: Այս ռազմավարությունը պետք է աջակցի տարբեր կրթուղիների գրավչությանը և լինի փաստահենք՝ հիմված հետազծային ուսումնասիրության և աշխատաշուկայից ստացված տեղեկատվության վրա և արժեքի ապագա աշխատունակությանն ու կարիերային ուղղված կրթական ծրագրերը:

(v) Սոցիալական գործընկերների հետ սերտ գործակցությամբ ուժեղացնել առկա ծրագրերի վերանայման գործընթացը՝ ուղղված աշխատաշուկային դրանց ուղղահայաց և հորիզոնական համապատասխանությանը:

Խորհրդատվություն 2. Կառավարման ընթացիկ կարգավորումների աղապտացում՝ ՄԿՈՒ ինքնավարության գործընթացի բարելավման և ՄԿՈՒ համակարգի համապատասխանությունը խթանելու համար:

Սույն խորհրդատվությունը ներառում է տարբեր նախաձեռնություններ, որոնք միասին կարող են նպաստել ՄԿՈՒ ոլորտում ինքնավարության գործընթացի բարելավման համար գործակցային միջավայրի ստեղծմանը՝ ավելի մեծ պատասխանատվություն և հաշվետվողականություն տալով գործընկերություններին և արդյունավետ կառավարման համակարգերին: Այն ներառում է հետևյալ ոլորտները.

(i) Վերապատրաստման ազգային ռեգիստրի ստեղծում:

(ii) Ազգային մի քանի ռեգիստրների ինտեգրում:

(iii) ՆՄԿՈՒ և ՇՄԿՈՒ մի քանի հաստատություններում անկախ և հեշտ կառավարելի հետազծային ուսումնասիրության կառուցակարգերի պիլոտային մշակում և գնահատում՝ համակարգային և կայուն հետազծային ուսումնասիրության կառուցակարգ մշակելու համար:

(iv) Ոլորտային, տարածաշրջանային կամ տեղական կրթական խորհուրդների ստեղծում (ՀՀ ԱՍՀՆ 49 կենտրոնների հետ գործակցությամբ), որոնք զբաղվածության խթանման, կրթության և աշխատաշուկայի միջև հանդես կգան որպես կապակցող օղակ՝ տեղեկատվության փոխանակման և տարածաշրջանային կամ տեղական

մակարդակում կարողությունների զարգացման նախաձեռնությունները համատեղ պլանավորելու նպատակով:

(v) Պետական–մասնավոր գործընկերության զարգացում՝ շենքերի, սարքավորումների շահագործման, ֆինանսավորման, ԱՀՈՒ-ի զարգացման, ուսումնական գործընթացում ընկերությունների աշխատակիցների ներգրավման և այլնի ուղղությամբ:

(vi) Միջնակարգ դպրոցներում ՆՄԿՈՒ և ՇՄԿՈՒ վերաբերյալ նպատակային իրազեկման արշավների իրականացում:

(vii) Որակի ապահովման և հաշվետվողականության ընթացակարգերի մշակում՝ կատարողականի տարեկան ցուցանիշներով:

(viii) Պիլոտային ծրագրերի իրականացում ՄԿՈՒ տարբեր տարակարգերի հաստատությունների շրջանակներում՝ ֆինանսավորման դիվերսիֆիկացված քաղաքականությամբ՝ ներառյալ ձեռնարկությունների մասնակցությունը:

Խորհրդատվություն 3. Ձեռնարկել միջոցներ ՆՄԿՈՒ համակարգի հասանելիությունը մեծացնելու համար:

Այս հանձնարարականը ներառում է մի շարք միջոցառումներ, որոնք իրենց հերթին կարող են նպաստել ՆՄԿՈՒ հասանելիության բարձրացմանը: Ստորև ձեռնարկվելիք միջոցառումները.

(i) Կառուցակարգերի և գործիքների մշակում՝ ինչպես օրինակ առաջնահերթ ոլորտների մասնավոր հատվածի հետ երկխոսության ամրապնդումը՝ տրամադրվող կրթաթոշակները որակավորման անհրաժեշտ պրոֆիլների հետ կապակցելու, միջնակարգ կրթության ոլորտում գտնվող սովորողների շրջանում առաջնահերթ ոլորտների վերաբերյալ տեղեկացվածությունը բարձրացնելու նպատակով, ինչն իր հերթին կնպաստի, որպեսզի սովորողները դիմեն ՄԿՈՒ հաստատության կողմից առաջարկվող անվճար տեղերին, որոնք բավական հաճախ մնում են թափուր:

(ii) Խորքային վերլուծության ենթարկելով ՆՄԿՈՒ հասանելիությունը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար՝ գործողությունների պլանի մշակում, ինչպես նաև մանրամասն ճանապարհային քարտեզի և կատարողականի տարեկան ցուցիչների ուրվագծում՝ կրթության հատուկ կարիքները ՆՄԿՈՒ համակարգ ներմուծելու համար:

(iii) Ներգաղթյալների/փախստականների/տեղահանված բնակչության համար ընդունելության հատուկ «ուղու» մշակում՝ ներառյալ որակավորման մակարդակների սքրինինգը, լրացուցիչ վերապատրաստման հնարավորությունը և կարիերայի ուղղորդման

աջակցությունը: Վերոգրյալից զատ՝ նաև տվյալների բազայի ստեղծում՝ Լեռնային Ղարաբաղից ներգաղթյալների և հարկադիր տեղահանվածների ընդունելության վերաբերյալ տվյալները գրանցելու համար:

Խորհրդատվություն 4. Ձեռնարկել միջոցներ ՇՄԿՈՒ համակարգի հասանելիությունը մեծացնելու համար:

Սույն խորհրդատվության հիմքում ընկած է ՇՄԿՈՒ ուսանողների թվի ավելացումը՝ ՀՀ հասարակության խոցելի խմբերին ուղղված նպատակային միջոցառումների միջոցով: Ստորև ձեռնարկվելիք միջոցառումները.

(i) Խոցելի խմբերին տրամադրվող ֆինանսական աջակցության և կրթաթոշակների ազդեցության մոնիտորինգ՝ այդ թվում նաև նշյալ անձանց ուսումնառության ավարտից հետո իրականացվող հետագծային ուսումնասիրությունների միջոցով:

(ii) ԿԳՄՍՆ-ի և ԱՍՀՆ-ի միջև սերտ գործակցությամբ ԵՄ անդամ երկրներում արդիական «Աշխատանքի երաշխիքի» (Job Guarantee) վերաբերյալ դրույթների ներդրում՝ հատուկ ուշադրություն դարձնելով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին:

Խորհրդատվություն 5. Նախաձեռնել միջոցառումներ՝ ՆՄԿՈՒ համակարգի գրավչությունը բարձրացնելու համար:

Սույն խորհրդատվությունը հիմված է երկրորդ գլխում զետեղված քաղաքականության վերանայման արդյունքների վրա և բաղկացած է միջոցառումների լայն շրջանակից, որոնք կարող են ՆՄԿՈՒ համակարգն ավելի գրավիչ դարձնել պոտենցիալ սովորողների, ինչպես նաև գործատուների համար: Ձեռնարկվելիք միջոցառումները տասն են.

(i) ՄԿՈՒ հաստատությունների և մասնագիտությունների բաշխման օպտիմալացմանը զուգընթաց՝ ՆՄԿՈՒ ծրագրերի արդյունավետ իրականացման համար կառուցակարգերի և թվային գործիքների մշակում, որոնք թույլ կտան աստիճանաբար նվազեցնել վճարովի տեղերի մասնաբաժինը:

(ii) ՄԿՈՒ շրջանավարտների համար ԲԿ կարճաժամկետ ծրագրերի մշակում, 4-րդ և 5-րդ մակարդակների որակավորումների վերանայում:

(iii) Դոնորների կողմից աջակցվող միջազգային ծրագրերի իրականացման փորձի հիման վրա ԱՀՈՒ-ի ներդրման ուղեցույցների մշակում:

(iv) Մինչ համակարգային ներդրումը և ՄԿՈՒ մասին նոր օրենքի ընդունումը, ԱՀՈՒ տարբեր պիլոտային ծրագրերի մանրակրկիտ ուսումնասիրության իրականացում՝ բացահայտելու քաղված դասերը, ծրագրերի միջև առկա

փոխկապակցվածության տարատեսակ խնդիրները, բացերը, ռիսկերը և այլն՝ ներառյալ այն խորհրդատվությունները, որոնք պետք է քննարկվեն ԿԳՄՄՆ-ի, վերջինիս գործակալությունների և գործընկերների հետ:

(v) Ներուժի գնահատման հիման վրա ՄԿՈՒ համակարգի միջազգայնացմանն աջակցելու համար գործողությունների ծրագրի մշակում՝ ներառյալ անձնակազմի կարողությունների զարգացումը՝ ինչպես օրինակ ՄԿՈՒ հաստատությունների անձնակազմի օտար լեզուների (մասնավորապես անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն) իմացության խթանումը:

(vi) Հայաստանի և արտասահմանյան ՄԿՈՒ հաստատությունների միջև գործակցության նախագծերի խրախուսում՝ մասնավորապես Էրազմուս+ ծրագրերին մասնակցության, Աշկերտության Եվրոպական Դաշինքին (EAfA), ինչպես նաև Եվրոպայում մեծահասակների ուսումնառության էլեկտրոնային հարթակին (EPALE) Հայաստանի անդամակցության միջոցով:

(vii) Մասնագիտությունների թվայնացման և նորարարության փորձնական նախագծերի մշակում՝ որոնց շրջանակում կառաջարկվեն ուսումնառության տարբեր ձևաչափեր, որոնք հնարավոր կլինի իրականացնել դպրոցական միջավայրից դուրս:

(viii) Թվային դասավանդման և ուսումնառության մեթոդաբանության շարունակական զարգացում:

(ix) Միջազգային դոնորների ֆինանսավորմամբ հայաստանյան և արտասահմանյան ՄԿՈՒ հաստատությունների միջև պիլոտային թվինինգ ծրագրերի խրախուսում և իրականացում:

Խորհրդատվություն 6. Նախաձեռնել միջոցառումներ՝ ՇՄԿՈՒ համակարգի գրավչությունը բարձրացնելու համար:

Սույն խորհրդատվությունը թիրախում է այն գործողությունները, որոնք կարող են ՇՄԿՈՒ համակարգն ավելի գրավիչ դարձնել պոտենցիալ սովորողների, ինչպես նաև գործատուների համար: Դրանք ներառում են ներքոգրյալը քայլերը.

(i) Արդյունքահեն որակավորումների մշակում, որոնք հիմված կլինեն զբաղմունքի չափորոշչի[1], կրեդիտային համակարգի ներդրման և մասնագիտական ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման համակարգը ներկայիս որակավորումների շրջանակին համապատասխանեցման վրա՝ ներառյալ կրեդիտային համակարգի ներդրումը ոչ ֆորմալ կրթության արդյունքում ձեռք բերված միկրոորակավորումների համար:

[1] Եզրույթի թարգմանությունը վերցված է «Մասնագիտական կրթության և ուսուցման եզրույթների բառացանկից» (https://www.gdf.am/images/GLOSSARY_GDF_2020_ARM.pdf)

(ii) Աշխատանքի վրա հիմված ուսումնառության հնարավորությունների ներդրում զբաղվածության խթանման ծրագրերում, աշխատուժի ոչ ակտիվ խմբերի համար նախատեսված և ոչ ակտիվ բնակչության կրթական ծրագրերի վերանայման վրա հիմված ծրագրերի կամրջում ՄԿՈՒ-ին:

(iii) Կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի և դասընթացների ճկուն համակարգի մշակում՝ ներառյալ միկրոորակավորումների ճանաչումը (խոցելի խմբերի համար մատչելի ուսումնառության ուղիներ ապահովելու նպատակով)՝ համատեղելով առցանց և առերես ուսումնառությունը, ԱՀՈՒ–ն, ինքնուրույն ուսումնառությունը և այլն: